այսպիսի պայմաններում հիւանդութիւնը տանում է բազմաթիւ անմեղ զոհեր, որպէս մինչև այժմ եղել է։ Եւ երբ նրանց բացատրում ես, որ տարափոխիկ հիւանդից պէտք է հեռու մնալ, նրա ամանից չպէտք է ուտել, խմել և ծխել, (քանի որ միևնոյն ղեյլանից հարիւրաւոր մարդիկ ծխում են), ահա թէ ինչ են պատասխանում ընդհանրապէս նրանք. «խոր պարոն դու էլ խո անաստուածացել ես. ինչ որ դսմոթ է, էն էլ կըլնի, յիսկի վախտ Աստծու դէմ մի խօսա»։

Շատ անգամներ նրանք բժշկելու համար դիմում են սրբերին, ուխտ գնալով զանազան ուխտատեղիներ, իսկ սովորական հիւանդութիւնների բժշկութեան միջոցները գործադրում են գերդաստանի մեծ մայրերն ու ծերունիները և երբ նկատում են, որ այդ միջոցները չեն օգնում, նոր դիմում են գիւղերում թափառող խաբեբայ հրեայ «հէքիմներին», որոնք մի քանի դեղի անուն սովորելով սկսում են վստահօրէն պարապել բժշկութեամբ և իրենց գիտութեամբ առողջացնելու փոխարէն աւելի ևս ծանրացնում, հասարակ հիւանդութիւններն աւելի բարդացնում ու բազմաթիւ կեանքեր ոչնչացնում, և դեռ մեր գիւղացի ժողովուրդն էլ վստահանում է նրանց. սակայն նա ինչով է մեղաւոր . . .

Ահա այս և այսօրինակ չարիքի առաջն առնելու համար նպատակայարմար էր, որ Զուղալից տարեայ գոնէ որոշ ամիսներին բժիշկ ուղարկուէր Փէրիայի հայաբնակ գիւղերը, որի կարիքն այնքան հրամայական է և անհրաժեշտ բժշկական օգնութիւնից զուրկ գիւղացիների համար։

Տնտեսական վիճակ: Շատ մռայլ և ողբերգական պատկեր է ներկայացնում ընդհանրապէս Փէրիայի գիւղացիութեան տնտեսական վիճակը։ Գիւղացիք մեծամասնութեամբ հողազուրկ—ռայեա ժողովուրդ են. չունեն սեպհական կալուածներ և մինչև այժմ էլ կառավարւում են հին ֆէոդալական կարգերով։ Կալուածատէր խաները և առբաբներն, որ շարունակում են իրենց ճնշող գոյութիւնը մինչև այսօր